ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆ

ՀՀ ք.Երևան, Բաբաջանյան 21
Հեռ. (+374 95) 95-20-25
Էլ.փոստ ncid@ncid.am

ՀՀ ք.Երևան, 0040, Աճառյան փ. 2
Հեռ. (+374 10) 61-71-07
Էլ.փոստ ncid@ncid.am

ԵԳ/0721-2025
14.08.2025թ.

«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՏԻԿԻՆ Մ. ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Աղաջանյան

Համաձայն ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 09.06.2025 թվականին կնքված թիվ ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԳԼ-2025/29-1 պայմանագրի և 09.07.2025 թվականին կնքված թիվ 1 Համաձայնագրի՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվեր համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում:

11.08.2025 թվականի թիվ ԵԳ/0709-2025 թվականի գրությամբ Ընկերությունը ծանուցել է Ձեզ առ այն, որ թիվ 1 Համաձայնագրով նախատեսված ապրանքներից մատակարարվել են միայն 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքները, իսկ 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները մինչ օրս չեն մատակարարվել՝ առաջարկելով երեք /3/ աշխատանքային օրվա ընթացքում կատարել վերը նշված պայմանագրով և համաձայնագրով սահմանված ապրանքների մատակարարումը:

Սակայն, «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի այն թողնվել է անարձագանք:

Համաձայն ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 09.06.2025 թվականին կնքված թիվ ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԳԼ-2025/29-1 պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետերի՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, քանի որ Վաճառողն էականորեն խախտել է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունը միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 09.06.2025 թվականին կնքված թիվ ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԳԼ-2025/29-1 պայմանագրի ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատշաճ ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Տեղեկացնում ենք նաև, որ Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ Հավելված 3.2 և Հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Կատարողին սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները (1,191,000 ՀՀ դրամ որակավորման ապահովում և 794,000 ՀՀ դրամ պայմանագրի ապահովում) փոխանցելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք 7 /յոթ/ աշխատանքային օրվա ընթացքում 2025 թվականի հունիսի 9-ին կնքված թիվ ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԳԼ-2025/29-1 պայմանագրի շրջանակներում ներկայացված՝ պայմանագրի ապահովման տուժանքի մասին

համաձայնագրով և որակավորման ապահովման տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները փոխանցել վճարման պահանջագրերով սահմանված Պատվիրատուի /Շահառուի/ հաշվեհամարին, իսկ վճարման հանձնարարականների բնօրինակները ներկայացնել Պատվիրատուին:

Նշված առաջարկը կատարելու պարագայում Կատարողը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

Ստորագրող
ԱՐՄԵՆ ՕՀԱՆՅԱՆ
3405890152

2025-08-14 15:38:14 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՐՄԵՆ ՕՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Փառանձեմ Խաչատրյան
Գնումների մասնագետ
Հեռ. 010 617107